

Հարց

Ե՞րբ է մերժվում ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ստանալու համար ներկայացված հայտը:

Պատասխան

Հայտը մերժվում է, եթե՝

ա) Հայտատուի կողմից չեն պահպանվել թույլտվության դրույթներն ու պայմանները.

բ) Թույլտվության երկարաձգումը հակասում է գործող օրենքներին եւ ծրագրերին.

գ) Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, կեղծ կամ խեղաթյուրված.

դ) ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում «Ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման կարգը հաստատելու մասին» կարգի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների պահանջներին.

ե) Հայտատուն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն զրկվել է հայցվող գործունեության տեսակով զբաղվելու իրավունքից.

զ) Թույլտվությունն ստանալուց հետո անցած ժամանակաընթացքում փոփոխվել են թույլտվություն տրամադրելու պայմանները.

է) Թույլտվությունն ստացած ԱՆՃը թույլտվությամբ սահմանված ժամկետում գործունեություն չի ծավալել.

ը) Թույլտվության նախատեսված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի նկատմամբ թույլտվություն ունեցող ԱՆՃի իրավունքները դադարել են:

թ) Հայտատուն Հայտը ներկայացրել է «Ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման կարգը հաստատելու մասին» կարգի 5.1 կամ 5.5 կետերում սահմանված ժամկետից ուշ կամ նախկինում տրված թույլտվության ժամկետը լրանալուց հետո:

(Ա.Գևորգյան)